

02.08.2018թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ Աշոտ Միմոնյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում


Հարգելի պրն Միմոնյան

«Հետք»-ը հողված է պատրաստում Հայաստանի Հանրապետությունում ազբեստյա խողովակների և դրանցով իրականացված ջրամատակարարման վերաբերյալ, ինչի համար խնդրում ենք հայտնել, թե՛

1. Արագածոտնի մարզում խմելու և ոռոգման ջրագծերն ի՞նչ տեսակի խողովակներով են անցկացված,
2. կա՞ն համայնքներ, որտեղ ազբեստյա խողովակներ են օգտագործված, եթե այո, ապա՝
 - ա) ո՞ր համայնքներն են և որ ջրագծերը,
 - բ) ե՞րբ են անցկացվել,
 - բ) քանի՞ կիլոմետր են կազմում,
 - գ) ի՞նչ վիճակում են գտնվում:

Կանխավ շնորհակալություն

«Հետք» թերթի լրագրող Քրիստինե Աղալարյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г. Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 с. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

№ _____
Ի պատասխան Ձեր 02-08-2018թ. գրության

**<< Հետք >> թերթի լրագրող
Քրիստինե Աղալարյանին**

ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների խմելու ջրի մատակարարումը հիմնականում իրականացվում է պողպատյա, թուջե և պոլիէթիլենային խողովակներով: Մարզի որոշ համայնքների խմելու ջրի ջրամատակարարման ցանցում կան ազրոցեմենտյա խողովակներով կառուցված հատվածներ: Այդ համայնքներն են Շղարշիկ՝ արտաքին ցանց 3.0 կմ, Եղնիկ՝ ներքին ցանց 0.4 կմ , Կաթնաղբյուր՝ արտաքին ցանց 3.5 կմ , ներքին ցանց 0.2 կմ, Իրինդ՝ արտաքին ցանց 0.5 կմ, Ն Սասնաշեն՝ արտաքին ցանց 5.0կմ, ներքին ցանց 0.65 կմ, Վ. Բազմաբերդ՝ արտաքին ցանց 0.5 կմ, Վ. Սասնաշեն՝ արտաքին ցանց 3.5 կմ, Ագարակավան՝ արտաքին ցանց 0.7 կմ: Ազրոցեմենտյա խողովակաշարերը կառուցվել են 1950–60-ական թվականներին: Խողովակների վիճակը ոչ բավարար է:

ՀՀ Արագածոտնի մարզում ազրոցեմենտյա խողովակներով ոռոգում իրականացվում է հետևյալ համայնքներում՝ Ոսկեվազ համայնքում 1.4կմ, Աղծք համայնքում 1.3 կմ, Ագարակ համայնքում 0.25 կմ, Լուսակն համայնքում 2.5 կմ երկարությամբ: Ազրոցեմենտյա խողովակաշարերը կառուցվել են 1960–70-ական թվականներին: Խողովակաշարերի վիճակը ոչ բավարար է:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

Կատարող՝ Ա. Դավ.....
Հեռ.՝ 0232-3-37-74